ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 474 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N 231-Ա, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի N 406-Ա, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N 511-Ա ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի N 270-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի՝

1. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի ապրիլի 26-ի «Դեպի Հայք» հիմնադրամի կողմից իրականացվող «Դեպի Հայք» ծրագրի մասին» N 231-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2) 2-րդ կետի 1-ին ենթակետում «2,260,000» թիվը փոխարինել «1,710,000» թվով.

3) 2-րդ կետի 5-րդ ենթակետում «2,000,000» թիվը փոխարինել «2,700,000» թվով.

4) 2-րդ կետի 6-րդ ենթակետում «2,750,000» թիվը փոխարինել «2,050,000» թվով.

5) 2-րդ կետի 9-րդ ենթակետում «4,000,000» թիվը փոխարինել «3,300,000» թվով.

6) 2-րդ կետի 12-րդ ենթակետում «43,149,170» թիվը փոխարինել «37,839,170» թվով:

2. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2020 թվականի հուլիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի ապրիլի 26-ի N 231-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» N 406-Ա որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում «1,100,000» թիվը փոխարինել «1,800,000» թվով:

3. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2021 թվականի հունիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի ապրիլի 26-ի N 231-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» N 511-Ա որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում «4,780,000» թիվը փոխարինել «5,330,000» թվով:

4. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի ապրիլի 10-ի «Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2019 թվականի ապրիլի 26-ի N 231-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» N 270-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին ենթակետում «5,000,000» թիվը փոխարինել «9,710,000» թվով.

2) 2-րդ ենթակետում «2,500,000» թիվը փոխարինել «3,100,000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

06.07.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ